



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 12

Հունվար 2011

Պետական գնումներ

Իրավունքների պաշտպանության միջոցները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Իձնչ է իրավունքի պաշտպանության միջոցը:
- Ուձվ ունի պահանջելու իրավունքների պաշտպանություն:
- Ուձր մարմիններն են քննում գնումներին վերաբերող բողոքները և դատական գործերը:
- Իրավունքի պաշտպանության իձնչ միջոցներ են հասանելի:
- Իձնչ է “պարտադիր մորատորիումը”:
- Կնքված պայմանագրերի անվավերությունը:
- Ընդհանուր սկզբունքներ, որոնց պետք է հետևեն վերանայող մարմինները և պետական պատվիրատուները:



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Ի՞նչ է նշանակում իրավունքի պաշտպանության միջոց:

Իրավունքի պաշտպանության միջոցները մասնակիցների կողմից ձեռնարկվող այն իրավական գործողություններն են, որոնք վերջիններիս հնարավորություն են տալիս իրավական ակտերի շրջանակում իրացնել իրենց այն իրավունքները, որոնք խախտվել են պետական պատվիրատուների գործողության կամ անգործության հետևանքով:

Որտեղի՞ց կարող ենք տեղեկանալ իրավունքի պաշտպանության միջոցների մասին:

Իրավունքների պաշտպանության միջոցները սահմանված են Հրահանգով և տեղական օրենքներով: Իրավունքների պաշտպանության միջոցները ներառված են ԵՄ իրավական ասկտերում և տեղական օրենքներում, որոնք նախատեսում են իրավունքի պաշտպանության միջոցների կիրարկման ընթացակարգերը: Իրավունքի պաշտպանության միջոցների մասին ԵՄ իրավական համակարգի մասին տեղեկատվություն կարելի է գտնել 89/665/ԵՏՀ Հրահանգում, որը վերաբերում է հանրային ոլորտում պայմանագրերի շնորհման ընթացակարգին և 92/13/ԵՏՀ Հրահանգում, որը վերաբերում է կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների պայմանագրերի շնորհման ընթացակարգին: Նշված և Հրահանգները փոփոխվել են 2007/66/ԵՀ Հրահանգով:

Որոշակի ընթացակարգային կանոններ սահմանված են նշված Հրահանգներով, սակայն դրանց կիրարկման առավել մանրամասն ընթացակարգերը նախատեսված են տեղական օրենքներով:

Ո՞րն է իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգների նպատակը:

Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգների նպատակը մասնակիցների՝ պայմանագրի շնորհման ընթացակարգում առաջացող հնարավոր խախտումները վիճարկելու և դրանք վերացնելու հնարավորությունն է, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու պայմանագրի շնորհման ընթացակարգերի օրինականությունը, գործընթացի թափանցիկությունը, մասնակիցներ մոտ առաջացնում է վստահություն և օժանդակում է մրցակցության աստիճանի մեծացմանը:

Մասնակիցների համար կարևոր է ունենալ պետական գնումների գործընթացներում իրենց իրավունքները պաշտպանելու միջոցներ, որոնք վերջիններիս հնարավորություն են տալիս հետևելու պայմանագրի շնորհման ընթացակարգին և անհրաժեշտության դեպքում պաշտպանելու իրենց խախտված իրավունքները: Այսպիսով, այս մեխանիզմները և՛ բարձրացնում են ընթացակարգերի օրինականությունը, և՛ խրախուսում են մրցակցությունը:

Նշվածից հետևում է, որ իրավունքների պաշտպանության միջոցների բոլոր ազգային ընթացակարգերը, պետք է լինեն.

- հստակ և պարզ, այսինքն՝ հասկանալի և մասնակիցների կողմից հեշտ կիրառելի,
- հասանելի պայմանագրի շնորհման ընթացակարգին մասնակցել ցանկացող բոլոր մասնակիցներին՝ առանց խտրականության, մասնավորապես անկախ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքի,
- Արդյունավետ՝ մասնակցի և/կամ պետական պատվիրատուների հակաօրինական գործողությունների կանխման և վերացման մեջ:

Ուժլ ունի պահանջելու իրավունքների պաշտպանություն:

Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգները սահմանում են, որ իրավունքների պաշտպանության միջոցները հասանելի են ցանկացած մասնակցի, որն ունի կամ ունեցել է պայմանագիր կնքելու հնարավորություն և որի համար եղել կամ առկա է վտանգ՝ պետական պատվիրատուի հակաօրինական գործողությունների արդյունքում կրելու վնասներ:

Սա նշանակում է, որ բոլոր մասնակիցները, որոնք ցանկություն են հայտնել մասնակցելու պայմանագրի շնորհման ընթացակարգին իրավունք ունեն օգտվել իրավունքների հասանելի պաշտպանության միջոցներից:

Հիմնականում դատարանում հանդես գալու և դատական գործերով ներկայացուցչության վերաբերյալ տեղական օրենքները կիրառելի են այնքանով, որքանով դրանք չեն հակասում Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգների պահանջներին:

Ուժր մարմիններն են քննում գնումներին վերաբերող բողոքները և դատական գործերը:

Բողոքները պետական պատվիրատուի մոտ կամ պետական պատվիրատուին վերահսկող մարմնում. Արտադատական կարգով վեճերի լուծումը խրախուսելու համար տեղական օրենքը կարող է պարտադրել կամ թույլատրել մասնակցին մինչև դատարանում հայց հարուցելը, արտադատական կարգով ներկայացնել բողոք՝ պետական պատվիրատուի՝ պայմանագրի շնորհման ընթացակարգում թույլ տրված հակաօրինական գործողությունների դեմ: Կախված հատուկ փաստերից և հանգամանքներից՝ բողոքները կարող են հանգեցնել օրենքի պահանջների կիրարկմանը և վեճերի արագ ու շուտափույթ լուծմանը:

Տրիբունալներ և դատարաններ. Դատական կարգով գնումների հետ կապված բողոքները ներկայացվում են կա՛մ գնումների մասնագիտացված տրիբունալ, կա՛մ սովորական դատարան: ԵՄ անդամ պետություններն ազատ են՝ ընտրել այս երկուսի միջև:

Իրավունքի պաշտպանության իձնչ միջոցներ են հասանելի:

Մանրամասն դրույթները, որոնք վերաբերում են իրավունքների պաշտպանության հասանելի միջոցներին, հիմնականում սահմանված են տեղական օրենքներով: Հրահանգները սահմանում են, որ անդամ պետությունները պետք է ապահովեն իրավունքների պաշտպանության երեք տեսակի հասանելիության հնարավորություն՝ միջանկյալ միջոցներ, անվավեր ճանաչելը և վնասների հատուցումը:

- **Միջանկյալ միջոցներ.** Միջանկյալ միջոցներն ապահովող բնույթի միջոցներ են, որոնք իրականացվում են պայմանագրի ծանուցման և պայմանագիր կնքելու ցանկացած որոշման հետ կապված, ներառյալ՝ պայմանագրի շնորհման որոշումը: Միջանկյալ միջոցների նպատակն անփոփոխելի իրավիճակների ստեղծման կանխումն է, և պայմանագրի շնորհման ընթացակարգն առանց այն մասնակցի շարունակելուց խուսափելը, որն այլ հավասար պայմաններում հնարավորություն կունենար մասնակցելու գործընթացին և հնարավոր է՝ նրան շնորհվեր պայմանագիրը: Այս նպատակներին կարելի է հասնել միայն, եթե տեղական իրավական համակարգը տրամադրում է արդյունավետ, պարզ և արագ հնարավորություն՝ ստանալ ապահովող միջոցներ, և եթե իրավասու վերանայող մարմինը, ըստ էության, համաձայն է շնորհել ապահովող միջոցը:

Կարող են պահանջվել կիրառելու հետևյալ միջանկյալ միջոցները՝.

- Պետական պատվիրատուի կողմից ընդունված ցանկացած որոշման կիրարկման կասեցում
- Պայմանագրի շնորհման ամբողջ ընթացակարգի կասեցում
- Խախտման ժամանակավոր ուղղում (սա կախված է տեղական օրենքներից և ավելի անսովոր է)

- **Անվավեր ճանաչելը:** Իրավունքների պաշտպանության միջոցներից անվավեր ճանաչման դիմումը վերացնում կամ անվավեր է ճանաչում պայմանագրի կնքման մասին հակաօրինական որոշումները: Անվավեր ճանաչման նպատակն ապացուցված հակաօրինական գործողությունների վերացումն է: Այս նպատակին կարելի է հասնել միայն, եթե տեղական իրավական համակարգը տալիս է արդյունավետ հնարավորություն՝ վերացնելու հակաօրինական որոշումը պահանջը կամ պայմանագիր կնքելու որոշումը, և եթե իրավասու վերանայող մարմինը վերանայում է պայմանագիր կնքելու որոշման ողջամտությունը:

Կարող են պահանջվել կիրառելու հետևյալ միջոցները.

- Պայմանագրի ծանուցումից, հրավերով նախատեսված փաստաթղթերից կամ պայմանագրի շնորհման ընթացակարգի հետ առնչվող ցանկացած այլ փաստաթղթերից խտրական տեխնիկական, տնտեսական կամ ֆինանսական պահանջների դուրս հանումը,
- պայմանագրի շնորհման հակաօրինական որոշման վերացում

- Ցանկացած հակաօրինական պահանջի կամ պայմանագրի կնքման որոշման դրական ուղղում կամ փոփոխում, օրինակ՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում հակաօրինական պահանջի ուղղում մասին պետական պատվիրատուի որոշումը կամ այն մասնակցի իրավունքների վերականգնումը, որն ընդունված հակաօրինական որոշման արդյունքում զրկվել է գործընթացին մասնակցելու հնարավորությունից:

Եթե հարուցվել է դատական հայց՝ պահանջել կիրառել միջանկյալ միջոցներ կամ անվավեր ճանաչել, կարո՞ղ է արդյոք պետական պատվիրատուն շարունակել գործընթացը և շնորհել պայմանագիրը: Ոչ, քանի որ Իրավունքների

պաշտպանության միջոցների Հրահանգները սահմանում են, որ եթե միջանկյալ միջոցների կիրառման կամ պայմանագրի շնորհման որոշման անվավեր ճանաչման հայց է հարցուվում դատարան, պետական պատվիրատուն չի կարող կնքել պայմանագիր մինչև դատարանի կողմից վճռի կայացումը:

- **Վնասների հատուցում.** Վնասը փոխհատուցվում ենայն մասնակիցներին, որոնք հակաօրինական գործողությունների արդյունքում կրեն են վնասներ: Վնասների հատուցման հայցի հարուցման ընթացակարգը և ընդդատությունը կախված են տեղական օրենսդրությունից, որը սահմանում է հայցի հարուցման կանոնները, վերջնաժամկետները, ապացուցման պահանջները և հատուցման չափը (օրինակ՝ պայմանները, համաձայն որոնց գնման ընթացակարգին մասնակցելու հետ կապված ծախսերը կարող են փոխհատուցվել): Իրավունքի պաշտպանության այս միջոցը նպատակ ունի փոխհատուցել վնաս կրած մասնակիցներին:

Միջոցները, որոնք պահանջվում են, եթե վնասների հատուցման հայցը բավարարվում է, մասնակցի կրած բոլոր վնասների հատուցումն է, որոնք սովորաբար ներառում են առաջացած իրական ծախսերը և, բացառության կարգով, բաց թողնված օգուտը: Փոխհատուցումը պետք է լինի ամբողջական, սակայն հաճախ շատ դժվար է սահմանել կրած վնասի չափը: Իրավունքի պաշտպանության այս միջոցը չի հակասում պայմանագրի շնորհման ընթացակարգին, դրա ընթացքին կամ ավարտին:

Ի՞նչ է “պարտադիր մորատորիումը”:

Պետական պատվիրատուներից պահանջվում է սպասել պայմանագրի շնորհման որոշման և հաղթող մասնակցի հետ պայմանագրի կնքման միջև ընկած որոշակի քանակի օրեր: Այս “պարտադիր մորատորիումի” ժամանակաշրջանը թույլատրում է մերժված մասնակիցներին վիճարկել պատվիրատուի որոշումը՝ իրենց չշնորհել պայմանագիրը, եթե նրանք կարծում են, որ այդպիսի որոշումն հակաօրինական էր և, հետևաբար, կանխել պայմանագրի կնքում այդ որոշման հիման վրա:

Որո՞նք են պարտադիր մորատորիումի ծանուցման պահանջները. Երբ պետական պատվիրատուն կայացրել է պայմանագիր կնքելու որոշումը, նա պետք է դրա մասին ծանուցի գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին, ներառյալ՝ այն մասնակիցներին որոնց հայտերը մերժվել են, և մինչև պայմանագրի կնքումը սպասի որոշակի օրեր: Ծանուցումը պետք է ներառի պայմանագրի կնքելու որոշման ամփոփ

պատճառներ, ինչպես սահմանված է Իրավունքների պաշտպանության միջոցների Հրահանգներում, և մասնավորապես, հաղթող ճանաչված մասնակցի անունը և վերջինիս հայտի հատկանիշներն ու հարաբերական առավելությունները: Պարտադիր մորատորիումի ժամանակաշրջանի ճշգրիտ տևողությունը նույնպես պետք է նշվի ծանուցման մեջ, որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենան իմանալու, թե ինչքան ժամանակ ունեն ցանկության դեպքում վիճարկելու պայմանագիր կնքելու որոշումը:

Ինչքա՞ն է պարտադիր մորատորիումի գործողության ժամկետը: Պարտադիր մորատորիումի գործողության ժամկետը առնվազն տաս օր է, սկսած մասնակիցներին պետական պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու որոշման ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրից, եթե օգտագործվում են ֆաքս կամ էլեկտրոնային միջոցներ: Պարտադիր մորատորիումի գործողության ժամկետը կարող է ավելի երկար լինել, եթե պետական պատվիրատուն օգտագործում է հաղորդակցման այլ միջոցներ, ինչպիսիք են փոստային ծառայությունները՝ ուղարկելու պայմանագիր կնքելու որոշման ծանուցումը: Պարտադիր մորատորիումի այս ժամկետները նվազագույն են. տեղական օրենքները կարող են նախատեսել ավելի երկար ժամկետներ:

Պարտադիր մորատորիումի ընթացքում այն մասնակիցները, որոնց հայտերը մերժվել են, կարող են ներկայացնել բողոք կա՛մ սկզբում պատվիրատուին՝ օգտագործելով բողոքների ընթացակարգը, և/կա՛մ անմիջականորեն վերանայող մարմին՝ խնդրելով կիրառել միջանկյալ միջոց կամ պայմանագիր կնքելու որոշման չեղյալ հայտարարում: Այս ընտրությունը կախված է նրանից, թե կա արդյոք արտադատական բողոքարկման հնարավորություն՝ տեղական օրենքների համաձայն, և թե այս բողոքարկման փուլը կամընտրական է, թե պարտադիր իրավունքի պաշտպանության այլ միջոցների օգտագործումից առաջ:

Արդյոք կիրառվու՞մ են պարտադիր մորատորիումի պահանջները պայմանագրերի շնորհման բոլոր որոշումների նկատմամբ: Պարտադիր մորատորիումի պահանջները կիրառվում են պայմանագրերի շնորհման որոշումների մեծ մասի նկատմամբ: Կան Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգներում սահմանված մի քանի բացառություններ.

- որոշումը շրջանակային համաձայնագրի կամ գնումների դինամիկ համակարգի համաձայն հատուկ պայմանագրի շնորհման համար է,
- 2004/18/ԵՀ Հրահանգի համաձայն՝ չկա պայմանագրի ծանուցման հրապարակման պարտավորություն,
- Գնման ընթացակարգին մասնակցում է միայն մեկ մասնակից և չկան այլ անձինք, որոնք շահագրգռված են կամ իրավունք ունեն վիճարկել պայմանագրի կնքելու որոշումը և օգտվել պարտադիր մորատորիումից:

Կնքված պայմանագրերի անվավերությունը

Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգները պահանջում են անդամ երկրներից ապահովել, որ տեղական վերանայման մարմինները վերացնեն կամ այլ կերպ անվավեր ճանաչեն կնքված պայմանագիրը, երբ այնպիսի հատուկ

կանոններ են բավարարվում, ինչպիսիք են պայմանագրի ծանուցման հրապարակման և շնորհման ընթացակարգի իրականացման ձախողումը, անհամապատասխանությունը շրջանակային համաձայնագրի համաձայն պայմանագրի շնորհման նկատմամբ կիրառվող կանոններին կամ պարտադիր մորատորիումի պահանջի խախտում, որը վնաս է հասցրել մրցույթի մասնակցին և զրկել է նրան միջանկյալ միջոցներ կամ անվավեր ճանաչել պահանջելու հնարավորությունից:

Անվավերության սանկցիան ընդունվել է՝ կանխելու պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու հապճեպությունը՝ խախտելով պարտադիր մորատորիումի կամ կասեցման ժամանակը կամ գնումների հիմնական կանոնները՝ ենթադրելով, որ նրանք կլինեն պաշտպանված ցանկացած սանկցիաներից՝ պայմանագրի կնքումից հետո: Նպատակը գնումների ոլորտի պաշտոնյաների ուշադրությունը գնումների կանոնների ճիշտ կիրառմանը սևեռելն է: Հակաօրինական եղանակով կնքված պայմանագրի անվավեր ճանաչման ֆինանսական ռիսկերը բարձր են են, քանի որ հաղթող ճանաչված մասնակիցը այս դեպքում կարող է պահանջել վնասների հատուցում տեղական օրենքների համաձայն:

Պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցը հարուցվում է այն մասնակցի կողմից, որը հայտարարում է, որ վնաս է կրել դրա հետևանքով: Հրահանգը պահանջում է անդամ երկրներից թույլատրել նվազագույն սահմանված ժամանակաշրջան՝ նման պահանջ ներկայացնելու համար, բայց սրանք միայն նվազագույն պահանջներ են և այսպիսով նման պահանջի մանրամասն վերջնաժամկետները և ընթացակարգերը սահմանվում են տեղական իրավունքով:

Անդամ երկրներն ունեն ընտրության իրավունք՝ թույլատրել, որ պայմանագիրը ճանաչվի անվավեր կա՛մ հետադարձ ուժ տալով, կա՛մ ապագայի համար: Տեղական իրավունքը, հետևաբար, կմանրամասնի, թե արդյոք անվավեր ճանաչելը.

- Հետադարձ ուժ ունի. այնպես, որ բոլոր պայմանագրային պարտավորությունները, ներառյալ նրանք, որոնք արդեն կատարվել են, պետք է վերացվեն և մասնակիցը և պետական պատվիրատուն պետք է իրենց հարաբերությունները կարգավորեն տեղական կանոնների համաձայն, կամ
- Ապագայի համար. Միայն ապագա և չկատարված պայմանագրային պարտավորությունները կարող են վերացվել: Եթե անդամ երկիրն ընտրություն է կատարում ի օգուտ ապագա վերացման, Հրահանգը պահանջում է, որ առկա լինեն նաև այլ պատիժներ: Դրանք են (1) պետական պատվիրատուի նկատմամբ կիրառված տուգանքները, որոնք պետք է համապատասխանաբար բարձր լինեն, որպեսզի պատժեն հակաօրինական գործողությունը, և (2) պայմանագրի կատարման ժամկետի կրճատումը:

Հրահանգը թույլատրում է վերանայող մարմիններին շնորհել հայեցողական իրավունք, եթե նրանք գտնում են, որ կան գերակայող պատճառներ՝ կապված պայմանագրի պահպանման ընդհանուր շահի հետ: Այս հայեցողական իրավունքը պետք է օգտագործվի զգուշությամբ, քանի որ այն վերապահված է որպես բացառությունը այն ընդհանուր կանոնից, որ հակաօրինակա պայմանագրերը չպետք է կիրառվեն:

Իրավունքների պաշտպանության միջոցների հետ կապված ընդհանուր սկզբունքներ, որոնք պետք է պահպանվեն վերանայող մարմինների և պետական պատվիրատուների կողմից

. Ներքոնշյալ ընդհանուր սկզբունքները պետք է պահպանվեն անդամ պետությունների կողմից իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգները կիրարկելիս և տեղական վերանայող մարմինների կողմից, ինչպես նաև պետական պատվիրատուի կողմից:

Ոչ խտրականությունը. Իրավունքների պաշտպանության միջոցների հասանելիությունը պետք է լինի բաց բոլոր մասնակիցների համար՝ առանց խտրականության, հատկապես՝ անկախ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքի: ԵՄ պետական գնումների կանոնները կյանքի կոչելու իրավունքի պաշտպանության միջոցները և նրանց պայմանները (ընթացակարգային կանոնները, ինչպիսիք են վերջնաժամկետները և ներկայացման պահանջները) պետք է առնվազն լինեն այնքան հասանելի, որքան նրանք, որոնք հասանելի են գնումների տեղական կանոնները կյանքի կոչելու համար:

Արդյունավետությունը: Իրավունքի պաշտպանության միջոցները պետք է ունենան բավարար ուժ՝ ապահովելու ԵՄ պետական գնումների կանոնների պահպանումը և վերանայումը պետք է լինի հնարավորինս արագ: Սա նշանակում է, որ պետական պատվիրատուն պետք է փորձի օժանդակել բոլոր իրավական ընթացակարգերի պատշաճ իրականացմանը և միշտ պետք է հետևի իրավունքի պաշտպանության միջոցներին վերաբերող որոշումներին: Իրավական ընթացակարգերը և վերանայող մարմինների գործողությունները պետք է ապահովեն արագ քննարկում և լուծում:

Թափանցիկություն. Պետական պատվիրատուն պետք է ապահովի, որ հենց հրավերով սահմանված փաստաթղթերի միջոցով, ինչպես նաև պայմանագրի կնքման որոշման ծանուցման մեջ, առավելագույն տեղեկատվությունն է տրամադրված մասնակիցներին:

- օրենքով նախատեսված՝ իրավունքի պաշտպանության միջոցների իրավունքի մասին, մասնավորապես՝ իրավունքի պաշտպանության այն միջոցների, որոնք կապ ունեն շնորհման ընթացակարգի իրականացման հետ, այսինքն՝ միջանկյալ միջոցների և անվավեր ճանաչման գործողությունները,
- համապատասխան ընթացակարգային կանոնների մասին, մասնավորապես՝ վերջնաժամկետների մասին և այն անձանց հանձնաժողովների տվյալները, որոնք ստանում են արտադատական բողոքները պատվիրատուի շրջանակներում, և
- ամբողջ տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես են կայացվում պայմանագրի կնքման մասին որոշումները, այնքանով, որքանով այս տեղեկատվությունը վերաբերում է տնտեսվարող սուբյեկտներին:

Վերանայող մարմինների գործունեությունն իրականացվում է համաձայն իրավունքի պաշտպանության միջոցների մասին Հրահանգների պահանջների և տեղական օրենսդրության և իրենց գործողություններն ու որոշումներն ընդունումը պետք է լինեն բաց և թափանցիկ:

Կոմունալ ծառայությունների կազմակերպություններ

92/13/ԵՏՀ Հրահանգը (փոփոխված 2007/66/ԵՀ Հրահանգով) նույնպես նախատեսում է իրավունքի պաշտպանության երեք միջոց՝ միջանկյալ միջոցներ, անվավեր ճանաչել և վնասների հատուցում:

92/13/ԵՏՀ Հրահանգը ԵՄ անդամ երկրներին հնարավորություն է տալիս, միջանկյալ միջոցների և հակաօրինակա որոշումների անվավեր ճանաչման փոխարեն, նախատեսել որոշակի գումարի վճարում (ինչպիսին է տուգանքը), երբ առաջանում է գնումների կանոնների խախտում: Այս գումարը պետք է լինի բավականաչափ մեծ, որպեսզի բացառի պետական պատվիրատուի կողմից հակաօրինակյան գործողություն կատարելը կամ դրան օժանդակելը):

Պարտադիր մորատորիումը, ուղղակի շնորհման վերաբերյալ ծանուցման պարտականությունը և պայմանագրի անվավերության սանկցիան, որոնք կիրառվում են պետական պատվիրատուի նկատմամբ, կիրառվում են նաև կոմունալ ծառայությունների կազմակերպությունների նկատմամբ:

Հետագա ընթերցանություն.

[SIGMA Public Procurement Training Manual](#)